Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

(Կ-874-25.06.2024-ՊԱ-011)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «արգելվում է» բառերից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, որից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«**անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց**՝ մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջոցներ):»:

Հոդված 2. Օրենքի 24.2-րդ հոդվածի 11-րդ մասում՝

1) 6-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) ապրանքների առաքում իրականացնող հեծանվորդների և մոպեդների վարորդների կողմից հեծանիվը կամ մոպեդը վարել առանց այդ տրանսպորտային միջոցի համար նախատեսված սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.4-րդ հոդվածով.

«**Հոդված 24.4. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությանը ներկայացվող պահանջները**

1. 18 տարեկանից բարձր տարիք ունեցող, ինչպես նաև 16 տարին լրացած և «AM» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը թույլատրվում է՝

1) հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով կամ հեծանվորդների համար գոտիով.

2) մայթով կամ հետիոտնային արահետով, եթե բացակայում են հեծանվային և հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով երթևեկելն անհնար է,

3) կողնակով, եթե բացակայում են հեծանվային և հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին, մայթը կամ հետիոտնային արահետը կամ դրանցով երթևեկելն անհնար է.

4) երթևեկելի մասի աջ եզրով հետևյալ դեպքերում.

ա. բացակայում են հեծանվային և հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին, մայթը, հետիոտնային արահետը կամ կողնակը կամ դրանցով երթևեկելն անհնար է,

բ. անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը հագեցած է արգելակով, ձայնային ազդանշանով, առջևում՝ սպիտակ, կողքերից՝ նարնջագույն կամ կարմիր, իսկ հետևում՝ կարմիր գույնի լուսանդրադարձիչներով, առջևում՝ սպիտակ լուսարձակով (լապտեր), որը պետք է միացված լինի օրվա մութ ժամանակ կամ անբավարար տեսանելիության պայմաններում:

2. Երթևեկելի մասում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությունը թույլատրվում է մեկ շարքով:

3. Մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը թույլատրվում է միայն համայնքի ավագանու կողմից սահմանված վայրերում, բացառությամբ 16 տարին լրացած և «ԱՄ» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց:

4. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցի արագությունը չպետք է գերազանցի 25 կմ/ժ-ը:

5. Հետիոտների և անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների համատեղ երթևեկության ժամանակ հետիոտները բոլոր դեպքերում ունեն առավելություն:

6. Եթե մայթով, հետիոտնային արահետով կամ երթևեկելի մասի եզրով շարժվելու համար անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներ օգտագործող անձի շարժումը վտանգում կամ խանգարում է հետիոտների շարժին, ապա անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց օգտագործող անձը պարտավոր է դադարեցնել դրա օգտագործումը կամ իջեցնել արագությունը և այն օգտագործել հետիոտների երթևեկության արագությունը չգերազանցող արագությամբ:

7. Արգելվում է՝

1) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով տեղափոխել ուղևոր կամ բեռ, (բացառությամբ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործողի կողմից առանց ձեռքերի օգտագործման պահվող (մեկ ամբողջություն հանդիսացող) ուղեբեռի), այլ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց (միջոցներ),

2) մեկ սոնու (առանցքի) վրա գտնվող՝ առանց ղեկային կառավարման համակարգի անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների օգտագործումը երթևեկելի մասի վրա և հեծանվորդների համար գոտիով,

3) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը 18 տարին չլրացած անձանց օգտագործման հանձնելը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի, որի դեպքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը սահմանված վայրում վարելու նկատմամբ հսկողության պարտականությունը կրում է անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը հանձնողը,

4) ղեկ ունեցող անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործել առանց ղեկը բռնելու,

5) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործելով հատել ճանապարհը հետիոտնային անցումներով,

6) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների օգտագործումը բնակավայրից դուրս ճանապարհներին,

7) օդերևութաբանական կամ այլ պատճառով թաց (այդ թվում՝ ձյան) ծածկույթ ունեցող մակերևույթով՝ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների՝ երթևեկության համար թույլատրված վայրերում շահագործումը,

8) ապրանքների առաքում իրականացնող անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործելն առանց հեծանվորդների համար նախատեսված սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով,

9) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցի, ինչպես նաև անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով քարշակումը,

10) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը վարել համայնքի ավագանու կողմից արգելված վայրերում,

11) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը վարել թունելներում:

8. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների վարձակալությամբ տրամադրելու գործառույթ իրականացնող կազմակերպությունները (անձինք) պարտավոր են բացառել բնակավայրի սահմաններում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցները 25 կմ/ժ-ից ավելի արագությամբ կամ համայնքի ավագանու կողմից արգելված վայրերում դրանց վարելու հնարավորությունը:

9. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցները կազմակերպությունների (անձանց) կողմից կարող են շահագործման հանձնվել, իսկ ֆիզիկական անձանց կողմից շահագործվել բացառապես արագություն չափող սարքավորումով կահավորված լինելու դեպքում:

10. Սույն հոդվածով նախատեսված կարգավորումներից բացի համայնքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության արգելված վայրերը սահմանվում են համայնքի ավագանու կողմից:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 24.4-րդ հոդվածի 9-րդ մասի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 24.4-րդ հոդվածի 9-րդ մասն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
~~Առաջին ընթերցում~~

(Կ-874-25.06.2024-ՊԱ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ ~~հոդվածը~~-հոդվածում «արգելվում է» բառերից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, որից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ~~նախադասությամբ~~պարբերություն.

«**անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց**՝ մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջոցներ):»:

Հոդված 2. Օրենքի 24.2-րդ հոդվածի 11-րդ մասում՝

1) 6-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) ապրանքների առաքում իրականացնող հեծանվորդների և մոպեդների վարորդների կողմից հեծանիվը կամ մոպեդը վարել առանց այդ տրանսպորտային միջոցի համար նախատեսված սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.4-րդ հոդվածով.

«**Հոդված 24.4. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությանը ներկայացվող պահանջները**

1. 18 տարեկանից բարձր տարիք ունեցող, ինչպես նաև 16 տարին լրացած և «AM» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը թույլատրվում է՝

1) հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով կամ հեծանվորդների համար գոտիով.

2) մայթով կամ հետիոտնային արահետով, եթե բացակայում են հեծանվային և հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով երթևեկելն անհնար է,

3) կողնակով, եթե բացակայում են հեծանվային և հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին, մայթը կամ հետիոտնային արահետը կամ դրանցով երթևեկելն անհնար է.

4) երթևեկելի մասի աջ եզրով հետևյալ դեպքերում.

ա. բացակայում են հեծանվային և հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին, մայթը, հետիոտնային արահետը կամ կողնակը կամ դրանցով երթևեկելն անհնար է,

բ. անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը հագեցած է արգելակով, ձայնային ազդանշանով, առջևում՝ սպիտակ, կողքերից՝ նարնջագույն կամ կարմիր, իսկ հետևում՝ կարմիր գույնի լուսանդրադարձիչներով, առջևում՝ սպիտակ լուսարձակով (լապտեր), որը պետք է միացված լինի օրվա մութ ժամանակ կամ անբավարար տեսանելիության պայմաններում:

2. Երթևեկելի մասում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությունը թույլատրվում է մեկ շարքով:

3. Մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը թույլատրվում է միայն համայնքի ավագանու կողմից սահմանված վայրերում, բացառությամբ 16 տարին լրացած և «АМ» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց:

4. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցի արագությունը չպետք է գերազանցի 25~~0~~ կմ/ժ-ը:

5. Հետիոտների և անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների համատեղ երթևեկության ժամանակ հետիոտները բոլոր դեպքերում ունեն առավելություն:

6. Եթե մայթով, հետիոտնային արահետով կամ երթևեկելի մասի եզրով շարժվելու համար անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներ օգտագործող անձի շարժումը վտանգում կամ խանգարում է հետիոտների շարժին, ապա անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց օգտագործող անձը պարտավոր է դադարեցնել դրա օգտագործումը կամ իջեցնել արագությունը և այն օգտագործել հետիոտների երթևեկության արագությունը չգերազանցող արագությամբ:

7. Արգելվում է՝

1) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով տեղափոխել ուղևոր կամ բեռ, (բացառությամբ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործողի կողմից առանց ձեռքերի օգտագործման պահվող (մեկ ամբողջություն հանդիսացող) ուղեբեռի), այլ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց (միջոցներ),

2) մեկ սռնու (առանցքի) վրա գտնվող՝ առանց ղեկային կառավարման համակարգի անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների օգտագործումը երթևեկելի մասի վրա և հեծանվորդների համար գոտիով,

3) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը 18 տարին չլրացած անձանց օգտագործման հանձնելը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի, որի

դեպքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը սահմանված վայրում վարելու նկատմամբ հսկողության պարտականությունը կրում է անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը հանձնողը,

4) ղեկ ունեցող անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործել առանց ղեկը բռնելու,

5) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործելով հատել ճանապարհը հետիոտնային անցումներով,

6) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների օգտագործումը բնակավայրից դուրս ճանապարհներին,

7) օդերևութաբանական կամ այլ պատճառով թաց (այդ թվում՝ ձյան) ծածկույթ ունեցող մակերևույթով՝ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների՝ երթևեկության համար թույլատրված վայրերում շահագործումը,

8) ապրանքների առաքում իրականացնող անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործելն առանց հեծանվորդների համար նախատեսված սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով,

9) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցի, ինչպես նաև անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով քարշակումը,

10) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը վարել համայնքի ավագանու կողմից արգելված վայրերում,

~~11)~~11) անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը վարել թունելներում:

8. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների վարձակալությամբ տրամադրելու գործառույթ իրականացնող կազմակերպությունները (անձինք) պարտավոր են բացառել բնակավայրի սահմաններում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցները ~~20~~ 25 կմ/ժ-ից ավելի արագությամբ կամ համայնքի ավագանու կողմից արգելված վայրերում դրանց վարելու հնարավորությունը:

9. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցները կազմակերպությունների (անձանց) կողմից կարող են շահագործման հանձնվել, իսկ ֆիզիկական անձանց կողմից շահագործվել բացառապես արագություն չափող սարքավորումով կահավորված լինելու դեպքում:

10. Սույն հոդվածով նախատեսված կարգավորումներից բացի համայնքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության արգելված վայրերը սահմանվում են համայնքի ավագանու կողմից:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 24.4-րդ հոդվածի 9-րդ մասի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 24.4-րդ հոդվածի 9-րդ մասն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-874-25.06.2024-ՊԱ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-874[1]-25.06.2024-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքի 2-րդ հոդվածը բաղկացած է բազմաթիվ պարբերություններից, առաջարկվում է հստակեցնել վերոնշյալ դրույթի հղումը և նշել, թե Օրենքի 2-րդ հոդվածում կոնկրետ որտեղ է լրացվում Նախագծի 1-ին հոդվածով նշված	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		1-ին հոդված	նախադասությունը: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. **«Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «արգելվում է» բառերից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, որից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. **անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց**՝ մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջոցներ):»:		

2.	ՀՀ կառավարություն	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Դրույթի իմաստային ամբողջականությունն ապահովելու համար՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 24.4.-րդ հոդվածի 7-րդ մասի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «11)անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը վարել թունելներում»:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	**«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մաս**	**Եվրոպական միության երկրների շրջանում (Մալթա՝ 20կմ/ժ, Լյուքսեմբուրգ՝ 25 կմ/ժ, Լիտվա՝ 25 կմ/ժ, Ավստրիա՝ 25 կմ/ժ, Ֆինլանդիա՝ 25 կմ/ժ, Գերմանիա՝ 20 կմ/ժ, Իտալիա՝ 30 կմ/ժ, Նիդերլանդներ՝ 25 կմ/ժ) ինքնագլորների առավելագույն արագությունը տատանվում է 20-30 կմ/ժ-ի միջակայքում, մինչդեռ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մասով, որպես արագության առավելագույն սահմանափակում, նախատեսված է 20 կմ/ժ-ը: Ըստ**	**Ընդունվել է:** **Կատարվել է համապատասխան փոփոխությունը:**	Ընդունվել է:

			այդմ, հիմք ընդունելով եվրոպական երկրների փորձը, առաջարկվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերում «20» թիվը փոխարինել «25» թվով:		
4.	ՀՀ կառավարություն	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված, 1-ին և 2-րդ մասեր	Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք շտկել դրանով կատարվող հղումները, որոնք կատարվում են Նախագծի 3-րդ հոդվածի 9-րդ մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 3-րդ հոդվածը չունի 9-րդ մաս, իսկ 9-րդ մաս ունի այդ հոդվածով Օրենքում լրացվող 24.4-րդ հոդվածը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

5.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված, 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք նախագծի 6-րդ հոդվածում շտկել դրանով կատարվող հղումները, որոնք կատարվում են նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծի 3-րդ հոդվածը չունի 3-րդ մաս, այլ՝ 3-րդ մաս ունի այդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 131.1-ին հոդվածը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է: